


ՏԵՐԻ ԵՆՈՐԵՆ

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Կամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ ձեռքին ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՈՒԹԻՒՆ

ԵԿԷՊՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահլիճ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան	30
Վեցամսեայ	19

E. TOROSSIAN
rec.-prop. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՈՒՆԸ ԿԱՆԿԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնայարարեան վրայ է :
Խնայարարեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են տրուիր
—*—
ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԿ
Կանխիկ վճարելի են

ԽՄԱԿՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏԱՍՏՆԱԿԱՆ Պատ. բաժն.

Նորակերտն ջերմաստիճանը կը խնդրուի որ բաւականին նախորդ տարիէն մնացեալ պարտքը կցելով որից մետ իրենց ԵՐԿՐՈՐԴ Տարեցրանի բաժնետիրացիներ, եւ հարկ չ'ընող մասնատու դիւնողներու, որոնք մեր դատարարին մը պիտի ըլլան ԱՐՇԱԼՈՅՍԻ արդէն բազմապատ ձեռքներէն :

ՅԻՍՈՒՍ ԵՐԲ ԾՆԱԻ

Այս հասարակ ընդունուած իրողութիւն մ'է թէ Յիսուսի Ծննդեան ճիշտ թուականը որոշուած պէս չ'ենք գիտեր : Մէն մի եկեղեցի իրեն համար թուական մը որոշած է եւ անոր համեմատ կը կատարէ Ծննդեան Ծօնը : Յիսուսի Ծննդեան չէ թէ միայն օրը այլ նաեւ տարին անորոշ է : Սա չափը ստորոգէ թէ Յիսուս ծնած ըլլալու էր գոնէ չորս տարի առաջ այս թուականին սկիզբէն : Պատմութիւնը կը հաստատէ թէ մեր թրուականը սկսած ասին Յիսուս իր հինգերորդ տարուին մէջ ըլլալու էր : Այս սխալմունքին պատճառը պարզապէս այս է թէ Քրիստոսի թրուականը առաջին անգամ սկսաւ գործածուիլ Անտր Գոթիկէն գարեբ վերջը : Յամի Տեառն 526 ին Դիոնիսիոս անունով վանական մը հրատարակեց առաջին քրիստոնէական տոմարը որուն մէջ 4 տարիներու սխալ մը ըրաւ : Մինչեւ այն ատեն քաղաքակիրթ աշխարհը սովոր էր գործածել այն օրացոյցը որ իր թուականը կ'սկսէր Հռոմէական շրջանէն : Աւստի Դիոնիսիոս հաշիւ ըրաւ թէ Յիսուսի Ծննդը պատահեցաւ Հռոմէական 754 թուականին : Բայց այս հաշիւը ուղիղ չէ : որովհետեւ պատմութիւնը մեզի կ'ըսէ թէ Բէթլէէմի անմեղ մանուկները ջարդող Հերովդէսը մեռաւ 750 թուականին Հռոմէական : այսինքն այն Հերովդէսը որ թաղաւոր էր Պաղեստինու վրայ Յիսուսի Ծննդեան օրերը մեռաւ 750 թուականին, եւ ուստի յայտնի է թէ Յիսուս ծնած ըլլալու էր 750 էն առաջ եւ կամ ուրիշ խօսքերով քրիստոնէական թուականը ըսկսած ըլլալու էր 750 ին փոխանակ 754 ին : Ահա այսպէս կը տեսնենք թէ մեր թուականին մէջ գոնէ չորս տարիներու սխալ մը կայ, եւ պէտք է այս նոր տարին ըլլայ ոչ թէ 1901 այլ 1905 :

Ասկէ աւելի անորոշ է անոր ո՞ր օր ծնած ըլլալու խնդիրը : Հոս ամենեւին լոյս մը չ'ունինք որով կարենանք ուղղել մեր հաշիւները : Բոլոր ընդունուած օրերը կարծիքի վրայ հաստատուած են : Թերեւս կարելի պիտի չ'ըլլայ ըստուգել Քրիստոսի Ծննդեան ճիշտ օրը այս աշխարհի վրայ : Արեւմտեան քրիստոնէականները Դեկ. 25 Ը. Ե. կ'ընդունին իբր օր ծննդեան : իսկ մենք Յուն. 6. բայց երկուքն ալ լոկ կարծիքներ են : Յուն. 6 թուականը սակայն իբր օր

Ծննդեան աւելի հին ժամանակներէ կ'սկսի : Ասիոյ, Եգիպտոսի եւ Դաղըրոյ հին եկեղեցիները այս օրը կը բռնէին : Հռոմէայ եկեղեցին իր սովորութեանը համեմատ իր իշխանութիւնը հրատարակելու նպատակով այս թուականը փոխեց եւ դեկտ. 25ը որոշեց որ արեւադարձին աւելի մօտ է : Այս եղանակին մէջ Հեթանոսները կարգ մը տօներ ունէին որ իրարու ետեւէ կուգային եւ քրիստոնէականներուն համար մեծ փորձութիւն մը կար երթալ եւ Հեթանոս բարեկամներուն մէջ գրացիներուն տօնական խնճոյքներուն մասնակցել : Որպէսզի ժողովուրդը այս հակաքրիստոնէական խնճոյքներէն հեռու պահուի ծննդեան տօնը հաստատուեցաւ եւ անոր թրուականը Յուն. 6 էն դեկ. 25 ին բերուեցաւ :

Սակայն երբոր ուշի ուշով կարգաւոր ըլլանք աւտորարանական պատմութիւնը Քրիստոսի Ծննդեան պիտի տեսնենք որ պարագաները մատնանիշ կ'ընեն մեր Ծննդը աւելի քան եւրոպացուցը : Հոն կը տեսնենք թէ Քրիստոսի Ծննդեան գիշերը « գաշտի մէջ կեցած հովիւներ կային որ իրենց հօտերուն գիշերուան պահպանութիւնը կ'ընէին » : Այս կը յայտնէ թէ ժամանակը ձմեռ չ'էր եւ դեկտ. ամիսը Պաղեստինու մէջ ամենէն ցուրտ եւ անձրեւոտ ըլլալով կարելի չ'էր որ հովիւները իրենց հօտերովը այն սեղ բաց օդին մէջ գիշերէին : Շատ հաւանական է որ Յիսուսի Ծննդը գարնան մէջ տեղի ունեցաւ ինչպէս որ եկեղեցական պատմաբաններն ուսման կը կարծեն : բայց եթէ ոչ ճիշտ գարնան գոնէ պէտք է ձմեռուան վերջին կէսին մէջ տեղի ունեցած ըլլալ : Այս հաշիւը մեզ աւելի մօտ կը բերէ մեր ծննդեան թուականին եւ ապահովաբար կրնանք ըսել թէ՛ եթէ երբէք ճշգրտութիւն կայ այս կարծիքներուն մէջ, մեր Ծննդեան օրը ամենէն ճիշտն է :

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԷՐ ԵՐԿՐՈՐ ԵՒ ՀՐԱՏԸ

Անգլիացի երեւելի գիտնական մը Սըր Ռոպերթ Պոլ, Լոնտոնայի արքայական կաճառին մէջ կարեւոր բանաստեղծութիւն մը ըրած է Հրատի եւ Երկրի պատահական հաղորդակցութեանց վրայ : Մեծ աստղադէտը շատ յոռետես գտնուած է այս երկու մոլորակներու միջեւ ըլլալիք հաղորդակցութեանց կարելիութեան վրայ :

«Հրատ մոլորակը — գիտել կուտայ գիտնականը — երբէք 35 մղոնէ երկրիս աւելի մօտեցած չէ, այսինքն 150 անգամ լուսնի հեռաւորութեան չափ :

«Էյֆէլի աշտարակին չափ բարձր չէնք մը գործնականապէս անտեսանելի պիտի մնար Հրատի մակերեւոյթին վրայ, նոյն իսկ եթէ աշխարհիս վրայ գտնուող ամենազօրաւոր հեռագիտակով նայելու ըլլանք : Էյֆէլի աշտարակին 50 անգամը բարձր եղող չէնք մը հազիւ փոքրիկ, մանարտիկ կէտի մը նման որոշելի պիտի ըլլար Հրատին վրայ :

«Շատ մը կատակաբաններ զուարճացած են երթադրելով թէ՛ Հրատի բնակիչները երկրիս բնակիչներուն ուշադրութիւնը գրաւելու համար գրօշակներ կ'երեւցնեն եղեր :

«Երբէք հաշուած չէն այդ կատակաբանները թէ՛ այդ պարագային 400 քիլոմէթր երկար եւ 600 քիլոմէթր լայն գրօշակ մը պէտք պիտի ըլլար — մտաւորապէս Իռլանտայի տարածութեան չափ բան մը — որուն միայն ճողը 800 քիլոմէթր բարձրութիւն պէտք է ունենայ : կարծեմ թէ՛ անկարելի բան մը պիտի ըլլար այդպիսի հսկայական տարածութիւն ունեցող գրօշ մը երեւցնել :

«Դալով անթեղ հեռագրի միջոցաւ Հրատի հետ հաղորդակցութեան մտնելու գաղափարին, Սըր Ռոպերթ Պոլ, բացարձակապէս կը մերժէ ընդունիլ եւ կ'երգում որ «Ալլո... Ալլո...» Հրատը կատարեալ լռորտ մըն է, զոր կուզեն ժողովրդին կլկեցնել : երբէ՛ք այդ սիրուն բացարձակութիւնը աշխարհիս վրայ մարդկային բերանէ մը դուրս չպիտի ելլէ :

Հիմա գանք այդ երեւելի գիտնականներուն խօսքերը մեծարժէք են, գաղափարներուն հաւկտակը պնդող Ամերիկացի գիտնական Պարք Նիգոլա թէսլայի կարծիքին : Պարոն Նիգոլա թէսլայ ալ Ատլանտեանի միւս կողմը մեծ համբաւ կը վայելէ իբր գիտնական : հետեւաբար աստիարակաբանութեան գաղափարներն ալ թիչ արժէք չունին գիտութեան նմարին մէջ : Պ. թէսլայ 20 օրէ ի վեր իր ակադեմիան ընկալուցնելով (ինտերքեթ) կպցուցած է եւ մեծ ուշադրութեամբ ու կատարեալ համբարատարութեամբ իր քննութեանց արդիւնքին կ'սպասէ :

«Սխալ է թէ՛ — կ'ըսէ Պ. թէսլայ — մըթնոլորտական ազդումներ ըլլան այն հոսանքները, որք իբր Հրատի հետ հաղորդակցութեան մտնելու տեղար ջանքերը վերագրեցի : Ա՛լ տարակոյս չունիմ այս մասին — իմ փորձերուս եւ իմ հաշիւներուս նայելով — լաւ շինուած երկարակապի ճօճանակով մը պիտի կարենամ մինչեւ Հրատ փոխադրել բաւականապէս ոյժ մը : կը կարծէք թէ հսկայական ուժակուտակիչը պէտք ըլլայ : սխալ է այդ երթադրութիւնը : Պէտք եղածը ուս է որ միայն կարող ըլլամ զօրաւոր ցնցում մը հաղորդել այդ մոլորակին, եւ հարկ չկայ որ այդ ցնցումը քառորդ ժամ մը տեւէ : մէկ երկվայրկեանի ցնցումը բաւական է, վերջապէս պիտի կարողանամ այդ ցնցումը յառաջ բերել, չնորհիւ 5 միլիոն ձիու ոյժ ունեցող ճօճանակիս, որ կը բաւէ աստղ համար : Հաւատացէք որ, թիչ ատենէն պիտի հաղորդակցինք Հրատի հետ :

Մենք անգէտներս ամենափոքր գիծաւորութիւնը չունինք միջ մուկ լինելու հայ մեծ գիտնականներու հակաճօճութեանց, բայց սակայն սա ըսենք որ հեռաձայնու համար պէտք է նոյն գիտնալ թէ՛ հոնտեղի բնակիչները — եթէ կան — կը խօսին եւ ինչ տեսակ բիզու, ապա թէ ո՛չ ամեն փորձ — նոյն իսկ յաջողակ — ապարդիւն պիտի մնայ :

Չ.

ՕՍՄԱՆ ՓԱՇԱ ՊԻՏԻ ՊԱՏԵՐՍՉՄԻ ԹՈՒՐ-ԲԻՈՅ ԴԷՄ

Դեռ շատ կանխահաս է որևէ հաս- տատական խօսք ընել Լոնտոնէն զարնուած հետեւեալ հեռագրի մասին . բայց որովհե- տեւ իւր պարունակութիւնը գերազանցա- պէս չահեկան է Հայ ժողովուրդին համար, արժանի կը համարինք զայն այս սիւնակ- ներուն մէջ ներկայացնելու :

Լոնտոն Դեկտ. 21. — Զօրա . Օսման Փաշա , որ 1878 ին Բրզական ապստամ- բութեան կը հրամայէր , «Տէյլի Մէյլի» ներ- կայացուցչին ըսաւ երէկ թէ Լոնտոնէն պի- տի մեկնել այսօր (Ուրբաթ) ուրիշ շարժումի մը գլուխը տնցնելու և Գիւրտիսթանը թըր- քական լուծէն ազատելու համար : «Յոյս ունիմ՝ Անգղիական համակրութեան վրայ գէթ» ըսաւ «եթէ ոչ նիւթական պաշտ- պանութեան վրայ , մեր պայքարին մէջ ընդդէմ բռնապետական թուրքերուն , ո- ընք , Բուսիոյ ազդեցութեան ներքե , բռնազատեցինք քաջ , պատերազմասէր Գիւր- տերը մարդասպանի դերը կատարելու ի- ընց եղբայր Հայերուն նկատմամբ :»

Օսման կը յայտարարէ թէ «100000 Գիւրտերու և Հայերու բանակ մը պատ- րաստ է սուրի ելնելու իւր գրոջին ներքե և անկասկածեան կռիւ մը մղելու : Կը խորհի թէ Բուսիա թուրքիոյ կողմը պիտի բռնէ : Հետեւաբար Ս . Բէդրասպուրկը պի- տի զանց ընէ իւր այցելելու Եւրոպեան մայ- րաքաղաքներու շարքէն , զոր սկսած է իւր այժմեան այցով յԱնգղիա : Օսման , որ արձանային զինուորական մարդ մ'է քառասունեակութիւն տարեկան , խօսեցաւ իւր ժողովուրդին արտունջներուն և տնայնորուն վրայ : Ի մէջ այլոց ըսաւ . «Ապտիւլ Հա- միտ վերջին ծայր անբարոյացուցած է Գիւրտ ազգը : Մեր յատուկ կեանքերու տուժով գրգռուեցանք մորթելու և շարժելու Հա- յերը , որոց հետ երբեմն սիրոյ ու բարե- կամութեան կապերով կցուած էինք : Երբ Պոլսոյ վերջին շարժը հրամայուեցաւ , հայրս իւր պետ Գուրտ զօրախումբերու , անձամբ ազատեց հազարաւոր Հայերու կեանքը , հեռի պահելով զանոնք Սուլթանին կատա-

զութենէն : Կը յուսամ թէ Հայերը մեծ թուով պիտի գան Միացեալ Նահանգնե- րէն՝ միանալու մեր բանակին : Ես սերած եմ նախնիքէ մը , որ սերունդներէ ի վեր կուտած է թրքական բռնապետութեան դէմ : Հակառակ այն յաճախական պար- սութիւններուն , որոց ենթարկած ենք Սուլթանին զօրախումբերը , յաջողած է ան , նենգութեանց միջոցաւ , զրկել մեզ յաղթութեան պտուղներէն և պահել մեզ հպատակութեան դրութեան մը մէջ , որ գերութեան հաւասար է : Երբ 1878ին մըա- րակեցինք թուրքիան , ազատութիւն զլա- ցաւ մեզ նա ըսելով թէ՝ Գիւրտիսթան չէր կրնար գոյութիւն ունենալ իւր անկախ պետութիւն մը : Ըսին մեզ թէ Բուսիա կը սպասէր կուլ տալու մեզ : Այսօր իսկ ա- պահով չենք թէ այսօրինակ վախճան մը կ'սպասուար մեզ , կը վախնանք թէ Սուլ- թանին անգութ ծայրայեղութիւնները ան- խուսափելի կերպիւ պիտի բաղխեցնեն զինք աշխարհի մեծ պետութեանց միոյն հետ : Հետեւաբար որոշած ենք այդպիսի տագնա- պի մը ծագումէն առաջ զարնել ի նպաստ մեր ազատութեան : Պիտի վայելինք Պարս- կաստանի պաշտպանութիւնը : Եթէ Զարը ձեռքերը հեռի պահէ անտարակոյս ենք թէ պիտի յաղթենք :»

Օսման կը յայտարարէ թէ իւր զին- ւորական յատակագծերը ամբողջովին դըմ- ուած են և պատրաստ պիտի ըլլան գոր- ծադրութեան առ առաւելն 1901 ամբան մէջտեղին , կ'ըսէ թէ համբաւաւոր Համիտիէ հեծեալազունը , — Օսմանեան բանակին ծա- ղիկը : որու օգնական հրամանատար է ինք , կազմուած է ամբողջովին Գիւրտերէ , ո- ընք պատրաստ են կուտելու անմիջապէս թէ որ ուզէ ինք անոնց գլուխը անցնիլ : «Գիւրտիսթան» շարունակեց Օսման , «ըս- քանչեւապէս յօրինուած է յարձակողական զինուորական գործողութեանց համար , ո- ըրովհետեւ ան կեդրոնն է Սուլթանին հրե- տանի ուժերուն , զորս Գիւրտերը պիտի չըջապատեն անմիջապէս երբ պատերազմ յայտարարուի : Օսման կը հաստատէ նաև թէ Ապտիւլ Համիտ հրահանգ տուած է իւր Լոնտոնի գեսպանին , մերձեցնել Անգ-

ղիական Պատերազմական նախարարութեան՝ համազելու համար զայն որ մերժէ Գիւրտին առաջարկութիւնները :

ՆԱԾԱՎ ԱՆԵՔՍԱՆԴՐՈՍԵՆ

ԱՆԵՔՍԱՆԴՐՈՍ ԿԱՐՏԱՐԱՆԸ

«Նոր-Օր» կը գրէ թէ Աղեքսանդրիոյ վար- ժարունը «չատ սուր կերպարանք մը առած է» :

Կը փափաքէի դիտել տալ , որ մեր վարժա- րանը ո՛չ սուր կերպարանք ունի , ո՛չ փութ , ո՛չ ալ կլոր , այլ կը բողբանայ շատ մը քա- սանդիւն , յուսաւոր , օգուէա սենեակներէ :

Պատ . Թաղ . Սորհուրդը , իր վերջին նիս- տին մէջ՝ նախագահութեամբ Սրբազան Առաջ- նորդին , կարգ մը սուր քիթեր կտրեց նետեց միայն , որոնք վարժարանի պատուհաններէն ներս ցցուելով՝ անոր երկրաչափական վայել- յութիւնը կը խանգարէին :

Առ այժմ այսչափ . երբ մեզի չի խօսեցը- նեն՝ լուռ կը մնանք . երբ խօսիլ սկսին , մենք ալ կը խօսինք :

ՄԱՆՐԱԴԻՏԱԿ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բրնոյթատ 15 Յունուար . — Պօէր Գոմանտոնիքը մեծ գործունէութիւն կը ցուցնեն բոլոր շրջակայքը և կ'երևայ թէ գէպի հարաւ կերթան ճը Ուէթին միանա- լու համար :

Լոնտոն 15 Յունուար . — Գէյթաու- նէն կը հեռագրեն թէ՝ Պօէրիքը Գարֆօն- թայի մօտ սահմանադրուիլը անցած են և մեծ քանակութեամբ ռազմութիւնք և պա- շաք գրաւած են :

Կ . Պօլիս 15 Յունուար . — Ալլանիոյ մէջ կացութիւնը ծանր է . Եթէմէնէն ալ խռովութեանց լուրեր կը հասնին . կառա- վարութիւնը հերքել կուտայ այդ լուրերը : Պոլսոյ և Զմիւռնիոյ մէջ նոր ժան- տախտի գէպեր չ'կան :

Գէյթաուն 15 Յունուար . — Արշա- ւողները Գլանլիլիամ հասած են , ետեւ- նուն մեծ գունդ մը կը հալածէ զանոնք , Գալլիիսի պօէրները աւելի յառաջացած չեն :

Բրնոյթատ 15 Յունուար . — Պայէր

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԺՈՒՂ ԳԼԱՐԹԻ

ՍԻԿԱՐԷԹԸ

(Շարն . Լախոտր թիւնն)

Այն ժամանակները Լօհօլայի մօտերը , հոս սա ձորին քովիկը գեղեցիկ խոշոր մէկը կար որ սիրուն ողջիկներուն շուրջը կը դառնար , իրաւ ալ կնիկներուն սերելի հղած ամեն յոտկութիւն ունէր . բայց ծնողքներուն սիրածներէն և ոչ մին : Ան Արագուիւն էր որ եկաւ ձեր զօրավար կարբիտօի իմացուց իր փառասիրութիւնները : Ուրախ զուարթ ստամանայ մ'էր , միշտ խենդու- թիւնները սիրող , առաջինը քնդախտի մէջ , ճարպիկ , ուժով , կոռուզան , յանդուգն , յան- պատրաստից նովելլետաներու մէջ դուրեր ըս- պաննող , արուեստով ցլամարտիկի մը պէս ա- ռաջին բանակուէին մորթը ծակել անուղ կամ գլուխը կոտրել տուող , Թագաւորի մը պէս նա- սատակազմ , սատկ մէկտեղ ասպետի մը երեւ- լոյթով և ճնօտը միշտ նոր անխուժած . Հէրակլէ- սի հասակով և կանացի ձեռքով մը : Բայց ան- կուտի , օրը օրին ապրող , այսօր Պիլպօսի և կամ Թօլօզաի դէմ վասակուած պնդակի մը մըր-

ցանակով երբեմն ալ ցլամարտիկներու հետ ըրած գրաւով մը :

Օր մը Սէն Սէպասթիէնի մէջ երբ շուարած ֆուստիլլան չէր կրնար ցուրը զսպիլ , որ սեւ , կատաղի , փրփրեախ գազան մըն էր , Ժուան Արագուիլ սկսաւ սուրել : Կրկէսին հանդիսա- տաները և ցլամարտիկները՝ բարձրաձայն պո- ռացին . «Ե՛հ ուրիմն , դուն կրկէս իջիւր , դուն չափուէ տեսներք » : Ո՛հ , ազնի՛ւ պարոնա , Ժուան ատանկ առաջարկներու վարանողներէն չէր սակայն , ոտքի կ'ելլէ անմիջապէս , կրկէս կը ցատկէ և Արագուիլն ձեռքէն կը խլէ կարճ կոթով սուրը : Նո՛ւ , սապէս . Արագուիլ զարմա- ցած և գուցէ սքանչացած ալ , որ այդ խենդը իրեն տեղը որովայնահաս պիտի ըլլար , մէկգի կը քաշուի : Ժուան ցուլին առջեւ կը տնկուի և զայն վերէն վար չափելով քիթին կը խնդայ և միւսնոյն ժամանակ , սուրին ծայրը գէպի յառաջ կը նետէ , հո՛ս , ամենալաւ տեղէն , ճիշդ ինչպէս որ թռիծն և կամ Լակաթիթիսօն պիտի ընէին . և խոշոր զանգուածը պա՛մ , պո՛ւմ կ'իջնայ : Ժան Արագուիլ այն ժամանակ թօրեթօ- ներուն (ցլամարտիկ) կը գառնայ և միշտ խըն- զալով հեզնութեամբ կ'ըսէ անոնց . «Կը տես- նէ՞ք . դժուար բան մը չէ հղիւր» :

Բայց ամենը այս չէ , ցլամարտիկները , որք արդէն բարկութիւնէ կատարած և կէս մը յիմարացած էին , հանդիսականներուն ծափա-

հարկութիւններէն , կեցցէներէն ու զիրենք ապ- տակելու նպատակաւ ուղղուած սուլումներէն խելայեղ , կը շրջապատեն Արագուիլը անոր յանգրնութեանը հաշիւը պահանջելու : Ծշմա- րիա որ իրեն գէշ խող մը պիտի խողային , բայց Արագուիլ արհամարանօք կը դիտէ այդ իրեն սպանացող կատաղի մարդերու կենդանի շրջանակը , թափը կ'առնէ և իր առջեւ գըռ- նուող ցլամարտիկին վրայն ցատկելով կրկէսի աստիճաններուն վրայ կը հասնի . բերանաբաց ձգելով իր թշնամիները , որք զինքը պիտի խեղդէին , հոգին հանէին , Նոյն իրիկուէր դա- նակ գանակի կուռեցաւ կրկէսին ետեւը , ցլա- մարտիկներէն միոյն հետ , որն որ իր նախախա- մինչեւ կէսը , Ժուանի փորը խօթեց : Արագուիլ 15 օր անկողնոյ ծառայեց , բայց այդ 15 օրէն յետոյ ալ մէջտեղ չ'ելաւ ժամանակ մը , թէ- պէտեւ միշտ պատրաստ նորէն ցուր մը սպան- նելու , այս անգամ ցլամարտիկի մը հետ մէկ- տեղ . . .

Գիտէք որ երբ մեր ցլամարտիկները վի- րաւորուին , շատ ոչինչ բան մըն է ատ իրենց համար , մորթիներին վերստին կը կարուի և միւր նորէն տեղը կուգայ : Շատ անգամ զանոնք եղջիւրի հարուածներով ծակծկուած կը տանին , մտեալ կարծելով . խաչի նշան մ'ալ իբր դամ- բանական . բայց ամսուան մը ընթացքին մէջ զանոնք վերստին կը գտնենք սքանաւ և կամ

հրամանատարին բոլոր զինուորներն Մաալ-
ֆոնթայնի մօտ երկաթուղիի գծէն անցած
են դէպի արեւելք ուղղուելով, ուր կը
յուսան հաւանականաբար Տո Ուէթի միա-
նալու :

Կը պատմեն ինչ 500 Պօէր փորձած են
Թուրքիայի ջուրի խողովակները կտրել,
որք Գարի երկաթուղոյն շոգեամանն
համար անհրաժեշտ են :

Բօրի-Էլիզապէթ 15 Յունուար . — Վա-
ճառասնեակը մեծ գործունէութիւն կը
ցուցնէ քաղաքը պաշտպանման վիճակի մէջ
գնեւու համար :

ՔՍԱՆԵՐՈՐԳ ԴԱՐՈՒՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՍԸ

Մարդս միշտ անծանօթին հետաքրք-
րութեամբ կը տուայտի . կ'ուզէ ապագան
իր մահկանացու աչքերէն ծածկող թանձր
քօլը պատուել և գիտնալ իրեն վիճակած
բաղդը . . . գոնէ մասամբ իւր տեղեակ ըլ-
լալ թէ՛ յաջողութիւն, թէ՛ ձախողուած
կ'սպասէ իրեն :

Արդարև ո՞ր երիտասարդ և օրիորդ չը
ուսածեր լազանքներ, չ'օրօրուր քաղցր ե-
րազներով : Անոնք ո՞րքան կը փափաքին
վերահասու ըլլալ թէ՛ արդեօք պիտի հաս-
նին իրենց ըզճանքին :

Այդ մասին հետաքրքրներուն ըստ կա-
րի գոհացում տալու համար բազմաքանակ
չատ եղանակներ հնարուած են :

Ատոնց ամենէն ընտիրն ու անվրէպն է
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՅՈՅԻՆ մէջի բազմա-
ցոյցը, որ իրեն ուղղուած խել մը հարցում-
ներուն ճշգրիտ պատասխանները կուտայ իբր
անսխալ հարցուկ մը :

Թերահաւատները թող բարեհաճին ան-
գամ մը գիտնալ սոյն ժողովրդական ծարե-
ցոյցին :

Օգտակարն ու զուարճալին միանգա-
մայն պարունակող սոյն գիրքը, ինչպէս
նաև պարզ անսխալ օրացոյցները գնել փա-
փաքողք պէտք է գիտնալ առ՝

ՕՀԱՆ ԽՆՏԱՄԵԱՆ

պատկերիլուան ձեռքը : Ժուան Արագուել միեւ-
նոյն շաղկապով շարուած էր, գանակի հարուած
մը եւ կամ գնդաթաթի (բազէթ) հարուած մը
իրեն համար միեւնոյն բանն էր, մէկ բառով
երկաթէ մարդ մը, վասգոն մըն էր այդ ժուանը :

Ասկէց զատ վերքերու համար շատ մը դե-
ղեր ունէր . ամէն բանէ կտոր մը ըբած ըլլա-
լուն եւ կտորածարոյթներուն եւ լեռներու վրայ
աճող խոտերով օճելիքներ պատրաստող մարդոց
քով յաճախելով այնպիսի գեղեր շինել սորված
էր, որոնցմով հիւանդ մը քանի մը օրէն ոտքի
կ'ելար : Պատրաստած էր նմանապէս գէշ խո-
տերէ, ընծախոտի ծաղիկ, թէ ուրիշ ծաղիկ,
լաւ չգիտեմ, տեսակ մը բաղադրութիւն, որ
մատին վրայ մատանիին մէջը կը կրէր, ըսե-
լով որ մարդ միշտ պէտք է որ իր կեանքին
սէրը ըլլայ, պէտք եղած ժամանակ միշտ դա-
շայն չգտնուիր մարդու ձեռքը . գանակը ձեռ-
քէր կ'առնեն, բայց մատանիին ո՛չ, մատդ թե-
նիդ տանելուդ պէս կ'ազատիս : Կը տեսնէ՞ք
պարոնս, որ պէտք եղածին պէս մարդ էր Արա-
գուել :

Օր մը, այս շճամեայ գեղեցիկ երիտա-
սարդը, որ սիրուած էր ամենէն, առանց մարդ
մը սիրելու, Չատիին երկուշաբթին Լօհօլայի
յօւնիսային, գեղեցիկ երիտասարդ աղջկան մը
հանդիպեցաւ, որն որ պարելու հրաւիրեց, այդ
աղջիկը ինչքան ճիշտ ճիշտ էր : Վախը քիչ մը
երիտասարդ գլուխները կը դարձնէ, հապա կի-

ՄԱՆՈՒ . — Երջակայ գիւղերէն եթէ
10 զոյ . ի նամակի փուլ գրկուի, իսկայն
սոյն գրքէն հատ մը կ'ուղարկուի նշանակ-
եալ հասցէին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Քարէն Յունուար 11 թուականաւ կը
հեռագրեն :

Արշաւույց արեւմտեան բանակը, Գալ-
վինիայէն 70 մղան դէպի հարաւ կը գտնու-
ուի և կ'սպասուի որ ծովեզերքի երկայն-
քէն տարածուին :

Նաւային զօրքեր և թնդանօթներ ցա-
մաք հանուեցան ի Լամպեր պէյ և հոն ամ-
բացան : Հերցոկ հրամանատարը 700 հոգիի
գլուխն անցած է և Քլանփելիտակէն 50 մը
դոն դէպ արեւելք կը գտնուի : Ուրիշ 900
Պօէրներ ալ Քրուիցիլիէի հրամանատարու-
թեան տակ կրաֆերէնթի գաւառակին մօ-
տերը կ'ասպատակեն : Զրոյց կայ թէ արեւ-
մտեան նահանգներու Հոլանտացիները ա-
պստամբներուն կը միանան : Ուրիշ փոքրիկ
Գօմանտօ մը, որ Օրանտ գետը անցած էր,
Ալիվայլ Նօրթիի մօտերը, ետ մղուեցաւ
հեծեալ ազարակատէրներու և Քարի ոստի-
կաններուն կողմէ : 5000 Պօէրներ, որոնք
դէպի արեւմտեան կողմի գերմանական գա-
ղութին միանալու կ'երթային, ճամբանին
դարձեւելով Քարի վրայ կը յաւաքանան :

— Հիմակու հիմա Հարաւային Ափրիկէ
զրկուելիք զօրաց թիւը 34000 ի պիտի հաս-
նի :

— Միեւնոյն թուականաւ Բրէթօրիայէն
կը ծանուցանեն :

Պօէրները Մաչատօօրքի վրայ յարձա-
կեցան ամսոյս 9 ին, բայց ետ մղուեցան .
Անգլիայի Հարրիս հարիւրապետը սպաննը-
ուած է :

— Զօրավար Պրիւս Համիլթօն պաշար-
մանէ ազատած է Հուբշթատ և Պուլթօն-
թայն քաղաքները . այս վերջինը երկու ա-
միսէ ի վեր Պօէրներէն պաշարուած է :

— Քարէն եկած լուրերը շատ տագնա-
պալից են : Բաշլայի Հոլանտացիներ Պօէր
Գօմանտօներու կը միանան, որոնք միշտ դէպի
հարաւ արշաւանքը կը շարունակեն :

— Վիէնայէն 11 Յունուար թուակա-
նաւ կը հեռագրեն . Ս . Բէթրպուրկէն կ'ի-
մացուի թէ՛ Զարր կուրծքի հիւանդութենէ
մը կը տառապի :

— Պէլժ գրամատէրներու խմբակ մը կը-
րէտական կառավարութեան հետ բանակ-
ցութեան մտնել սկսած է, կրէտէի մէջ եր-
կաթուղոյ գիծեր հաստատելու համար :


— Կ . Պօլսէն ստացուած հեռագիրները
Բերայի մէջ ժանտախտի դէպք մը կը հաս-
տատեն : Բուժուող մեւաճ է : Դէպքը պա-
տահած տեղը և բոլոր շրջակաները զինու-
րական շղթայի տակ առնուած են :

Ահաւասիկ նոր պատրուակ մ'ալ ժան-
տախտը կը հայթայթէ, որպէսզի Սուլթանի
կառավարութիւնը հայերուն նկատմամբ մը-
տագրած չարքներուն մէկ մասն ալ իրա-
գործել յաջողի :

ՆՈՐ ԿԵԱՆՔԻՆ կը քաղենք հեռեկալը .

Անգլիական մամուլին կը հեռագրուի
թէ՛ Հայաստանի վիճակը սոսկալի է : Պօլ-
սոյ մէջ կը վարցուի թէ նոր շարքեր տեղի
ունեցած ըլլալու են, վասնզի Դուռը Պատ-
րիարքարանին ազգարարադիր մը զրկած է
ծանուցանելով որ վանի և Մուչի կողմերը
յեզափոխականներ կը գտնուին եզեր . Յայտ-
նի է թէ ամեն անգամ որ կտորած մը տե-
ղի ունենայ, կամ առաջ կամ ետքը, Հայ
յեզափոխականներու ներկայութիւնը կը
ծանուցուի թիւրք իշխանութեան կողմէն .
Բաշէշի Առաջնորդը ստիկանական հսկողու-
թեան ներքե Պօլիս կը բերուի :

Անգլիական կառավարութիւնն ալ ըս-
կըսած է նեղը գնել Բ . Դուռը, գանձելու
համար կտորածներու միջոցին անգլիացի-
ներու կրած վնասին իբր փոխարինութիւն
պահանջուած գումարը : Անգլիական կառա-
վարութիւնը կը կարծէ թէ՛ թուրքիա Ամե-
րիկայի պահանջներուն գոհացում տուած է,
մարտանաւի մը գնումին միջոցաւ վճարելով
Միացեալ Նահանգներու ուղած գումարը :



թա՛ռը — որ գոնէ ըստ իս սիրոյ մէջ ամենամեծ
գերը կրնայ կատարել — ոչ ինքնա եւ ո՛չ ժուան
այս առաջին տեսակցութիւնը պիտի մոռնային,
այս բացօթեայ պարը, ժպիտներու ընկերացող
նուագը, մանաւանդ մեր խնձորղիէն աւելի՛
գինովցնող երգը

Այդ Զատիին երկուշաբթիէն ի վեր, Ժու-
ան Արագուելն՝ որ սովորաբար այնչափ ուրախ
զուարթ էր, վայրագ եւ խրչող գարձաւ,
քիչ կը խօսէր եւ շատ տրոտում կ'երեւար . իսկ
անդին, Հայր թիպուրչիօ Եէկարէյ, ա՛լ երբէք
չէր ժպտեր, սէրը անոնց մէջէն կ'անցնէր :

Ո՛հ կատարեալ, բացարձակ, կայծակի
նման արագ, սէր մը, որ նմանը չունի . աղ-
ջիկը միշտ գայն կ'երազէր . իսկ Ժուան ալ
միշտ աղջկանը վրայ կը խորհէր . ծաղկազուրկ
պարտէզի մը նման տխրամած էր ու սէրը գայն
զածան կը դարձնէր . ինչո՞ւ, որովհետեւ զար-
պանը տուր մը չունէր, իսկ Բէքան հարուստ
էր եւ գլխաւորաբար այն երկաթղուիս Հայր
Եէկարէյը աղջկանը ըսած էր որ կրբէ՛ք, եր-
բէ՛ք՝ Բէքան աղքատ մարդու մը չպիտի տար ու-
րոյ միակ ապրուստը խաղաղունդն էր :

— Բայց վերջապէս — ըսաւ օր մը Ժուան
Հայր Եէկարէյի — Բէքա կը սիրէ զիս . ինձի
խոստովանեցաւ :

— Ինչն ալ ըսաւ, պատասխանեց Հայրը :
— Զայն կը պաշտեմ, վրան կը խենդենամ,

վրան հոգի կուտամ, Եթէ ինձի չտաք ինքզին-
քըս պիտի սպաննեմ, ի՞նչ ընելու եմ զայն
կիսա ունենալու համար :

— Ինչ որ ես ըրի եղբակացուց ազարակա-
պանը . աշխատիլ եւ տուն բերել զաւակներդ
մնուցանելու չափ ստակ, ես այսչափ տարի
պարապ սեղը չյոգնեցայ որ ելլամ ստակս եւ
աղջիկս թատերաչօյիկի մը ձեռքը տամ, Հա՛
նեթէ գաս եւ ինձի ըսես ինչ բաւական ատեն ժող-
ուած ես եւ աղ ու հացիդ բաժինը բերես, այն
ատեն Բէքան քեզի կուտամ, քանի որ քեզ կը
սիրէ :

— Որչա՞փ բերելու եմ — հարցուց Ժուան :

— Երկու հազար տուրօ :

— Երկու հազար տուրօ՞, ըսաւ Արագուելը,
մոխիւր կարած . ուրկէ՞ց պիտի գտամ ես այդ-
չափ գրամը :

Երկու հազար տուրօն ձեռ ստակովը 10000
ֆր . կ'ընէ :

Ես հողէն գտայ — պատասխանեց ագա-
րակատէրը, փնտռէ՛ :

Եւ Հայր թիպուրչիօ այնպիսիներէն չէր
որ խոսքերնին ես կ'առնեմ, ո՛չ . Արագուել
եթէ կուզէր թող ստակէր, ինչպէս որ կ'սպաս-
նար ծերուկին, եւ կամ հողը փորէր ստակ հա-
ւաքելու համար . ծերուկը անողք էր եւ Բէքան
որ քալ աղջիկի մ'էր, հօրը անհասկանալի չպիտի
գտնուէր . բայց գեղեցիկ երիտասարդին շատ
սիրահարուած ըլլալով, պիտի համակերպէր
սպասել մինչեւ որ Ժուան պահանջուած օժիտը
բերէր :

(Շարունակելի) Թարգմ . ԼԵՒԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՀՐԱՏ ՄՈՒՐԱԿԷՆ ԲՆԱԿԻՉ ՄՐ

Անցեալ օրերը երկայն ճերմակ մօրուքով, խիստ մաքուր հագուած և գլանաձև գլխարկ գրած ծերուկ մը Փարիզի էթիէն Տօլէի ոստիկանատունը կը ներկայանայ և կ'ուզէ ոստիկանութեան դօմիսէրին հետ խօսիլ :

Անմիջապէս Պարոն Ժերարի գրասենեակը կը մտնեն զինքը, մարդուկը ծանրութեամբ կը բարեւէ, գլխարկը աթոռի մը վրայ կը դէ և այսպէս կ'սկսի :

—Պ. դօմիսէր, ձեզի դարմանք պատճառող յայտարարութիւն մը պիտի բնեմ, ես Արէս Մուրակին բնակիչներէն եմ, երեկ ցորեկէն ետքը գլխարկէս ելայ լեռներու վրայ որսալու համար. գիշերը վրայ հասած ըլլալուն և ես ալ սաստիկ յոգնած ըլլալուն, հեղեղատի մը եզերքը քնացայ :

Ինչ անցած դարձած է քունիս միջոցին, չգիտեմ... միայն սա չափը գիտեմ որ՝ երկիր մուրակին վրայ արթնցայ, բաւական ատեն թափառեցայ այս առաւօտ և անցորդներուն հարցուցի թէ որո՞ւ պէտք է գիտեմ զիս հայրենիքիս փոխադրելու համար, անոնք ալ ձեզի ցուցին. ասոր վրայ ձեզի եկայ աղաչելու որ ամենէն առաջ հաճիք կնոջ տեսուական հեռագիր մը զարնէք որպէսզի իմանայ ողջ առողջ երկիր մուրակին վրայ գտնուելու և մտատանջութեան մէջ չ'մնայ :

Գօմիսէրը տեսնելով որ խենդի մը հետ է գործը, խօստացաւ անյապաղ հեռագրել անոր կնոջ և ճարպիկութեամբ զայն հարցափորձելով հասկցաւ որ ժաղօպ Լէման կը կոչուի, 62 տարեկան է, նախկին վաճառական կաշիի և կը բնակի Գուաուս փողոցը թիւ 16 :

Արգահատելի խենդը անմիջապէս մասնաւոր յիմարանոց զրկուեցաւ :

ՄԱՆԿԱՐԱՐՉ ՏՐԻԿԻՆ ՍՈՓԻԿ ԱՂԳԱՊԵՏԵԱՆ Շարա-Ապսիդ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն փոխադրած է Շարա Ապսիդ Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին գիմաց, Անմէս պէյ Ապսիդ Բազիլի 20 թիւ սեփականութեան մէջ :

Տրիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ և յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիրէրնակ ազգայնոց և նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարուել իւր խնամոցը պէտք ունեցողներուն :

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում :

ՄԻ՛ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՒ

Գանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 'Վ'Ն Ի նիքէլ, կոթէն լարող սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխապէս է և նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՆ է սկսեալ մինչև 2500 ՂՐՆ. Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և քրտիտէ ժամացոյցներ. պատի և քօնուլի քրտմազան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

ձոխ հաւաքածոյ բուն Ամերիկէսի Թօ. նօկրաֆներու :

Տպագրութիւն ԺՊՊՐԼԴՆԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալատի փողոց. Խաղէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաթէ Տը Լա Պուրսի կից :

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂՆԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներս են և ասոնցմէ մինչև ցարբ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վիպակակներով և մեքայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՇ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ Ա.Ռ.Ա.ՉԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արտեսահանդիսին մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ ի յասկանջին :

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Չորի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց սուղներուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն ինքնաքանակից և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ «ԱՐՇԱԼՈՅՍ» ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱՋԻԶԻ ՍԿԻԲԸ

Օստանիյե դեղատանին դիւնացի փողոցի մէջ :

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին :

Այցեխարտեր, Երգարտարաններ, Գիրքեր, Հրաշխարտեր, Մահագրքեր, Տեղեկագրիւններ, Կանոնագրիւններ, Տոմարներ և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւնները կը վաճառուին հետեւեալ գրքերն :

- 1. ԲՆԱՇԽԱՐՀԻ ԲԱՌԱՐԱՆԻ Ս. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է «Արշալոյսի» մէջ :
2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիս մուտքը, ինչպէս կը լսենք, արգիլուած է եղեր :
3. ՀԱԻՍՔԱՆՈՑ հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրինութեամբ Տ. Լևոն Եղիազարեանցի :
4. ՉՈՒՍՐՃԱԼԻ Անիքթոններ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ :

Ա Ջ Դ

Երկարատեւ ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէս մեկնած ըլլալով պիտի Երկարատեւ համար Արեւելեան Մամուլ ներկայացուցին և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է գ. Լեւոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին :

Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, գիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով :

Քաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոքրիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յ'Ազգ. վարժարանի Տարագլէլ-Կիւնէնա :

Ա. ՊԱՆԵԱՆ Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԳԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՐՈՒԻ 1 ՄԻԼԵՍ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՄ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ է Գաթիքէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ինքնութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՎ գլխաւոր գործաւատար յ'Ազգ. քանդորիս :